

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՇԱՆԵ ԱՔԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ
ԱՆՏԻԿ ՈՍԿԵՂԱՐԻ ՆԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Քրիստոսի հարությունից հետո սկսված առաքելական բուռն քարոզչությունը ծավալվում էր հունահռոմեական աշխարհում, որն արդեն ուներ հոգևոր-մշակութային դարավոր փորձ և ավանդություններ: Ասործո բարի լուրը հեթանոսներին փանդ առաքյալներն իրենք էլ բազմիցս հիշեցնում էին մշակութային այն պարարտ հողը, որն առկա էր իրենց ճանապարհին և հաճախ մեծապես օգտվում էին հունահռոմեական մարքի պրամադրած միջոցներից¹: Ավերարանների և առաքելական թղթերի գրության ու խմբագրման աշխատանքներն իրականացվեցին հենց այդ մշակութային յուրահարկությունների մեջ, որով և հասկանալի ու ընկալելի դարձան հունահռոմեական հասարակությանը:

Ավերարանների՝ հունահռոմեական հասարակության մեջ ներմշակութայնացվելու մասին բազմաթիվ մեկնադրություններ և ուսումնասիրություններ են հրապարակվել, որոնք պակաս կամ առավել չափով փորձել են վերհանել ու պարզել մասնավորապես ավերարանների և առաքելական թղթերի կապը լատին և հույն հեղինակների երկերի հետ²: Այդ առնչակցությունը հաճախ հանդես է եկել իբրև պարզ նմանակում քրիստոնյա հեղինակների կողմից, իսկ հաճախ էլ անփիկ հեղինակներն իրենք են ուղղակիորեն կամ անուղղակիորեն (չասելու համար գաղտնագրաբար) հղել կամ վկայակոչել քրիստոնեական առաջին գրվածքները: Նենց այս վերջին առանձնահատկությանն է վերաբերում սույն հոդվածը՝ նպատակ ունենալով քրիստոնեության ծագման շրջանում սպեղծագործած երկու անփիկ հեղինակների երկերի դիտարկման օրինակով ցույց տալ նրանց բավական լայն ու ի մտքո ծանոթությունը քրիստոնեությանը:

Տիպոս Պերպոնիոս Արքիպիսկոպոսը ներկայացնում են հունախոս և լատինախոս այն երկու հիմնական հոսանքները, որոնք ուղղորդել են անփիկ գրականության զարգացումը: Այս երկու հեղինակների երկերում են արտացոլված նաև անփիկ *վեպի* (roman) ժանրային զարգացման երկու ձևերը: Առաջինի մեջ ներառված վեպում միակ գործող անձը գլխավոր հերոսն է, իսկ երկրորդի մեջ՝ գլխավոր հերոսն ու նրա սիրուհին կամ

1 Ավաժի լավագույն վկայություններից մեկը Գործք Առաքելոցի ԺԹ գլուխն է, որտեղ Պողոսն աթենացիներին խոսում է իրենց իսկ լեզվով:

2 Այս առումով շահեկան կարող են լինել հետևյալ ուսումնասիրությունները՝ **Ilaria Ramelli**, Indices de la connaissance du Nouveau Testament chez les romanciers de l'Antiquité et autres auteurs païens du I^{er} siècle après Jésus Christ, « La Contribution des Sciences Historiques à l'Étude du Nouveau Testament », Rome, 2-6 octobre, 2002 (Actes: Libreria Editrice Vaticana); **Robert Renehan**, Classical Greek Quotations in the New Testament, Orientalia Christiana Analecta (1973) 195; **Dennis MacDonald**, Does the New Testament Imitate Homer: Four Cases from the Acts of Apostles, Yale University 2003:

սիրելիները³։ Սակայն այս երկու անդիկ հեղինակներին անդրադառնալուց առաջ հարկ ենք համարում դիտարկելու վաղ քրիստոնեական համայնքների կյանքում առկա մեկ այլ կարևոր իրողություն։ Խոսքը մասնավորապես քրիստոնեական առաջին նամակագրական օրինակի մասին է⁴, որպեսզի վկայվում է Հռոմեական կայսրության մեջ քրիստոնյաների նկատմամբ հալածանքների և քրիստոնեության՝ իբրև արգելված կրոն ընկալվելու մասին։ Նամակն ունի նաև անդիկ շրջանին բնորոշ նամակագրական գաղափարներ, որի վերծանումը պարզում է սրբազան անվան (nomina sacra) առկայությունը նամակում։

1. Ամմոնիոսի նամակն Ապպոլոնիոսին, ամենատառջին քրիստոնեական նամակագրությունը։ Ինչպես հայրնի է, Rylands 457 պապիրոսը (սպորեն՝ R457) հայտնաբերվել է Եգիպտոսում և այժմ պահվում է Մանչեսթր քաղաքի (Անգլիա) Ջ. Ռայլանդսի անվան գրադարանում։ Պապիրոսը պարունակում է Հովհաննու Ավերաբանից մի փոքրիկ հատված (ԺԸ 31-33, 37-38)։ 1935 թվականին հրապարակվելով՝ այն վերջնականապես հստակեցրեց Հովհաննու Ավերաբանի գրության թվականը՝ Ք. հ. Ա դարի վերջ⁵։ Սակայն R457-ի հրապարակությունից մի քանի տասնյակ տարի առաջ Ք. հ. Ա դարի վերջով թվագրված մեկ այլ հին եգիպտական պապիրոս էր հայտնաբերել և հրապարակել Փարսոնսը⁶։ Սույն վավերագրի քրիստոնեական ծագումն այսօր հաստատված է բազմաթիվ հեղինակների և ուսումնասիրողների կողմից։ Հիմնական փաստարկը նշված նամակների մեջ առկա սրբազան անվան (nomina sacra) ձևով կազմված և ողջույնի կառուցվածքով պարկերված $\chi\alpha\rho\iota\varsigma$ -ողջույն բառի առաջին տառն էր, որ քրիստոնեական ծածկագրերի մեջ Ա դարի վերջում գործածվում էր իբրև Քրիստոսի խորհրդանշան։ χ տառը հեթանոսական միջավայրում ուներ առանձնահատուկ կիրառություն. բանասիրական առումով այն կոչված էր բնագրի մեջ ընթերցողի ուշադրությունը հրավիրելու այս կամ այն հատվածին, իսկ առեւտրական գործարքներում՝ պայմանագրերի լուծարման կամ նամակների կնքման համար⁷։ Նստակ է, որ վերոնշյալ նամակներում այն ուներ քրիստոնեական ծածկագրի նշանակություն՝ հաշվի առնելով, անշուշտ, այդ ժամանակներում քրիստոնյաների դեմ նոր թափով վերսկսված հալածանքները։ χ -ի ձևով գրված նամակում (հուն. $\epsilon\pi\iota\sigma\tau\omicron\lambda\eta\ \kappa\epsilon\chi\rho\iota\sigma\mu\acute{\epsilon}\nu\eta$) Ամմոնիոսը հայտնում է Ապպոլոնիոսին, որ ինքը վերջինից նմանապիպ մի նամակ է ստացել։ Այս տեղեկությունը բավական վիճահարույց է և առիթ է տվել բազմաթիվ ուսումնասիրությունների ու տեսությունների առաջացման։ Սակայն բնագրում առանձնահատուկ կերպով շեշտված χ տառը ենթադրել է տալիս քրիստոնեական համարեքստի գոյությունը, ընդ որում՝ երկու տարբեր քրիստոնեական համայնքների՝ հաշվի առնելով նամակում շեշտվող *ku-ménar, qou-qour* դերանունների առաքությունը։ Ըստ այսմ, Ամմոնիոսն աղոթում է, որ Ապպոլոնիոսի հա-

3 Տե՛ս **Харитон**, Повесть о любви Херея и Калпирои, перевод древнегреческого и комментарии академика И.И.Толстого, Москва-Ленинград, 1959 (այսուհետև՝ **Харитон**, Повесть), էջ 157։

4 Նոր Կրակարանի և անդիկ նամակագրության կապի մասին ավելի մանրամասն տե՛ս **Hans-Josef Klauck**, Ancient Letters and the New Testament, A Guide to Context and Exegesis, Baylor University Press, 2006, էջ 9-101, 183-227։

5 Տե՛ս **J. Mélèze Modrzejewski**, Les Juifs d’Egypte. De Ramsès II à Hadrien, Paris 1991, էջ 186։

6 Տե՛ս **P.J. Parsons**, The Earliest Christian Letter ?, in Miscellanea Papyrologica (Pap. Flor. VII), Florence 1980, էջ 289։

7 Տե՛ս **Ilaria Ramelli**, նշվ. աշխ., էջ 2։

մայնքում մշտապես փոխմեքենայում ու սերը : Այս մաղթանքը, բնականաբար, հուշում է, որ թե՛ Ապոկալիպսի համայնքում և թե՛ Ամմոնիոսի անձնական շրջանակում կային դժվարություններ, արարաբին և ներքին անհամաձայնություններ, որոնք պետք էր հաղթահարել : Իսկապես, նամակի գրության ժամանակ՝ Ղուկասիանոսից Տրայանոս կայսրերի ժամանակաշրջանում, քրիստոնյաներն ընդհարակ էին անցել, որովհետև քրիստոնեությունը հայտարարվել էր իբրև սնահավատություն՝ *superstitio illicita*, սկսած դեռևս -Ք. հ. 35 թվականի սենատի որոշումից, ինչպես վկայում է Տակիտոսը⁸ : Այս ամենի մասին քաջադեղյակ Ամմոնիոսը նամակի վերջում եզրակացնում է. «Ոգիս իսկապես հանգստանում է, երբ ամեն անգամ հանդիպում է քո անվանը՝ չնայած այդքան էլ չի վարժվել խաղաղ լինելուն՝ կարարվածի պարճառով... Բայց այն դեռ դիմանում է»⁹ : Այսպիսով, ասվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ -Ք. հ. Ա դարի վերջում քրիստոնյաները, փարածվող հալածանքների պարճառով, սովորություն էին դարձրել ծածկագրել իրենց նամակները՝ դրանք նշանակելով հունարեն χ տառով ձևավորված փարբերանշանով :

Ստեղծված իրավիճակում քրիստոնյաների դեմ հալածանքները կրում էին համապետական բնույթ՝ ներառելով նաև հեթանոս մտավորականներին և գրական գործիչներին : Սրանով է թերևս պայմանավորված այն բացահայտ արհամարհական և հեզմական քրամադրությունը, որով խոսում են անտիկ շրջանի հեղինակները քրիստոնյաների մասին : Մեր քննարկելիք երկու հեղինակների երկերում ես առկա է այդ հեզմախառն ծաղրն ընդդեմ քրիստոնյաների, որոնք իրենց ժամանակի ամենավրանգավոր քաղաքն էին համարվում : Երկու անտիկ հեղինակներն էլ ամենայն հավանականությամբ ծանոթ են եղել քրիստոնեությանը՝ մարկոսյան և հովհաննիսյան ավետարանական ավանդությունների միջոցով, մեկը՝ Հռոմում (Պետրոսիոս), մյուսը՝ Եփեսոսում (Խարիսիոս) :

2. *Մարկոսի Ավետարանը և Պետրոսիոսի «Մարիիկոնը»*. Ներկայումս բազմաթիվ ուսումնասիրողներ հակված են Մարկոսի ավետարանը -Ք.հ. 70 թ. թվագրելու : Ըստ այսմ բոլորովին զարմանալի չէ՝ Ներոն կայսեր այդքան մոտ կանգնած մի անձնավորության՝ Տիբուս Պետրոսիոս Արքիպրի¹⁰, որ այդքան հեղաբոլորված էր իր ժամանակի երբայական մշակույթով, քրիստոնեական վաղ շրջանի հեղինակների երկերի նկատմամբ ցուցաբերած հեղաբոլորությունը¹¹ : Պետրոսիոսը պարկանում էր դերասանների և մտավորականների այսպես կոչված ներոնյան շրջանակին և ստեղծագործում էր քրիստոնյաների նկատմամբ սանձազերծված ներոնյան հալածանքների ժամանակ, երբ -Ք. հ. 64 թ. քրիստոնյաների մի մեծ մաս, ըստ Տակիտոսի և Կոելմես Հռոմեացու վկայությունների¹², մեղադրվեց Հռոմ քաղաքում բռնկված ահավոր հրդեհ բորբոքելու մեջ : Ժամանակակիցների վկայության համաձայն՝ Պետրոսիոսը կոչվել է «*arbiter elegantiarum*», այսինքն՝ «նրբաճաշակության

8 Տե՛ս Margaret M. Mitchell & Frances M. Young (ed.), Cambridge History of Christianity, vol. 1, Origins to Constantine, Cambridge University Press 2008, էջ 70-72 :

9 Տե՛ս Ilaria Ramelli, նշվ. աշխ., էջ 4 :

10 Պետրոսիոսի կյանքի ու գործի մասին տե՛ս A. Collignon, Étude sur Pétrone, Paris 1892, J. Mackail, Latin literature, New York, 1899, էջ 183-185 :

11 Այս նյութի վերաբերյալ առկա մատենագիտության համար տե՛ս Ilaria Ramelli, նշվ. աշխ., էջ 5 :

12 Տե՛ս Margaret M. Mitchell & Frances M. Young (ed.), նշվ. աշխ., էջ 71 :

դարավոր», որպեսզի էլ թերևս հարույժ անուն դարձած *Արքիպիոս* ձևը¹³: Մի որոշ ժամանակ լինելով Բյուզանդիայի կառավարիչը՝ նա կարողացել է իրեն դրսևորել իբրև հմուտ և փութաջան ղեկավար : Սակայն ներքինյան պալատի դավադրություններին չգիմանալով՝ բաշվել առանձնացել է իր պալատում՝ վարելով փիլիսոփայի ու արվեստագետի կյանք : Ընդգիմանալով Ներոն կայսեր պալատական խեղկարակություններին՝ նրան մի երգիծական քառաբող է ձևում ու երակները կտրելով վերջ տալիս կյանքին¹⁴:

Պերսոնիոսն իր Սափրիկոնում Մարկոսի ավերարանից որոշ հարվածներ է փոխանել, հարկապես Քրիստոսի՝ Բեթանիայում օծման դրվագը (Մրկ. ԺԴ. 3-9=Մարիիկոն, 77, 7-78, 4), որը Պերսոնիոսի երկում օգտագործված է թաղման արարողության ժամանակ կիրառվող նարդոսի յուղի առիթով : Թեև, որն իր բնույթով բացառիկ է ամբողջ դասական գրականության մեջ : Ի դեպ, գրական այս նմանությունը դեռևս Ի դարի սկզբին մաքրանշվել է գերմանացի գիտնական Preuschen-ի կողմից: Նա, սակայն, ավելի ուշ շրջանի գործ համարելով Մարկոսի Ավերարանը, համոզված է, որ Բեթանիայի օծման դրվագն ավերարանի՝ էլ փոխառել Սափրիկոնից¹⁵: Մարեոն ներկայացնում ենք Սափրիկոնի և Մարկոսի Ավերարանի համապարասխան դրվագները.

«Spero, inquit, futurum ut aequae me mortuum iuvet tamquam vivum... putate vos, ait, ad parentalia mea invitatos esse» (Մարիիկոն, 77, 7-78, 4) :

« ἄφετε αὐτήν. τί αὐτῇ κόπους παρέχετε ;... προέλαβεν μυσίσαι τὸ σωμαί μου εἰς τὸν ἐνταφιασμόν... » (Մրկ. ԺԴ. 6, 8) :

Նարդոսը, որ հունահռոմեական աշխարհում օգտագործվում էր քրոնական և թաղման արարողությունների ժամանակ, ամբողջ դասական գրականության մեջ միայն այս երկու բնագրում է, որ վկայված է իբրև թաղման ժամանակ օգտագործվող ծիսական նյութ : Ավելին, լատինական Bezae Codex Cantabrigiensis ձեռագիրը, որ ավելի էին է, քան Վուլգատան, Մրկ. ԺԴ. 3-ում ունի *ampullam* բառը¹⁶, որը կարարելապես համապարասխանում է Պերսոնիոսի տեքստում օգտագործված *ampullam nardi* արտահայտությանը : Լատին դասական հեղինակի երկում գլխավոր հերոս Տրիմալխիոնն այս դրվագում հրաժեշտ է տալիս իր հյուրերին՝ բաշ գիտակցելով, սակայն, որ մահվանից հետո դեռ երկար է ապրելու : Պերսոնիոսը, Մարկոսի Ավերարանի այս հարվածն օգտագործելով, փորձել է ծաղրի և հեզմախառն երգիծանքի միջոցով սպեղծել իր դրամայի ոգուն համապարասխանող մթնոլորտ¹⁷:

Մարկոսի ավերարանի հետ նմանության եզրեր ունեցող այլ հարվածներ ևս կարե-

13 Տե՛ս «L'oeuvre de Pétrone: Le Satyricon», traduction nouvelle et complète, avec Introduction et Notes par Louis de Langle, Paris 1923, էջ 4-5:

14 Անդ, էջ 8:

15 Տե՛ս E. Preuschen, *Die Salbung Jesu in Bethanien*, in *Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft* 3 (1902), էջ 252-253 ; 4 (1903), էջ 88:

16 «Habens *ampullam* nardi pistici praetiosi et fracto alabastro effudit super caput eius», տե՛ս «Bezae Codex Cantabrigiensis», A Critical Introduction, Annotations and Facsimile by Frederick H. Scrivener, London 1864, էջ 313:

17 «Այդ ժամ նա բացեց նարդոսով լի ամանն ու մեզ ամենքիս օձեց իր խոսքերով. «Մաղթում եմ, որ մեռած ժամանակ էլ նույն փառքն ունենամ, ինչ ունեի կենդանությանս օրոք» (թրգմ. ըստ հեղինակ ժողովածուի՝ «Римская сатира», Москва, 1989, էջ 177) :

լի է գտնել Պերպունիոսի երկում : Սափրիկոն 74, 1-3-ում աքաղաղի կանչը, նորից *cena Trimalchionis*-ում, ներկայացված է իբրև մի վաթ իրադարձության նախանշան, մինչդեռ Տին աշխարհում աքաղաղի կանչը և աքաղաղի կերպարն ինքնին համարվում էին հաղթանակի և բարի լուրի նախանշաններ¹⁸: Սակայն Պերպունիոսի երկում բոլորովին հակառակն է. աքաղաղն այսպես ներկայացվում է իբրև *index*, մարմնիչ, դավաճան՝ չնայած որ Պերպունիոսի երգիծական պատմի համաձայն՝ իր կյանքն ավարտում է խարույկի վրա¹⁹: Նավահաբար, Տին աշխարհում այդքան փարածված մրայնությունից փաթեթավոր գրական այս կտորն իբրև օրինակ ունեցել է Մարկոսի Ավերարանի՝ Պերպունիոսի ուրացման դրվագը, որը մյուս երկու համարեա ավերարաններից ամենաշատն է կենդանությունում Պերպունիոս առաքյալի ուրացման փաստի վրա, քանզի աքաղաղն այս Ավերարանում կանչում է երկու անգամ (Մարկ. ԺԴ 68, 72) :

Մարկոսի Ավերարանի հետ Պերպունիոսի երկի մյուս նմանությունը վերջինիս դրվագներից մեկում Սբ. Նաղորդության խորհրդի մասին երգիծական և ծաղրական ակնարկն է : Սափրիկոն 141, 2-ում Էռմոլայիսը խոստանում է, որ իր մահվանից հետո իր հարսությունը կթողնի նրան, ով իր մարմինը կտոր-կտոր կանի և կուրի ժողովրդի առաջ. «*Omnes qui in testamento meo legata habent ... hac condicione percipiant quae dedi, si corpus meum in partes conciderint et astante populo comederint*»²⁰: Այսպես արդեն հստակ է քրիստոնյաների դեմ հռոմեական իշխանությունների կողմից ներկայացվող մարդակերության հրեշավոր մեղադրանքի մասին ակնարկը²¹:

Վերջապես Քրիստոսի խաչելությանը և հարությանը վերաբերող երգիծական ակնարկներ կարելի է գտնել «Եփեսոսի անառակուծին» հարվածում, որպես ակնարկվում է Քրիստոսի մարմնի՝ առաքյալների կողմից գողացված լինելու մասին փարածված գրույցը (Սափրիկոն, 111, 5-112, 3)²²: Խոսքը մասնավորապես երեք խաչյալների մասին է, ովքեր դատապարտված են կուսակալի կողմից և որոնց վրա զինվորներ են նշանակված, որպեսզի ոչ ոք մարմինները չգողանա : Սակայն երբորդ օրը երեք դիակներից մեկը գողացվում է և նրա փեղ մեկ ուրիշ դիակ է դրվում : Ինչպես հայտնի է ավերարանական պատմից (Մարկ. ԻԸ 2), Քրիստոսի մարմնի գողացված լինելու մասին կեղծ լուրերը շրջանառության մեջ էին մտնել հրեաների կողմից: Նենց այս կեղծ գրույցի վրա է կարծես հիմնվում Նազարեթի Լեդիկա կոչվող փաստաթուղթը, որի համաձայն մահացածի դին գողացած ցանկացած մեկը (հուն.՝ *τυμβωρροσύνα*) դատապարտվում էր մահվան, մինչդեռ նախկինում հռոմեական կայսրության մեջ այս հանցանքը պարտվում էր միայն պուզանքով :

Վերաբերյալ բոլոր օրինակներից թերևս կարելի է ենթադրել, որ Պերպունիոսը ծանոթ էր Մարկոսի Ավերարանին կամ, որ ավելի հավանական է, քրիստոնեության մասին պարզվող բանավոր գրույցներին ու պարամություններին, որոնք էլ օգտագործել է իր թարերգություններն ու երկերն սրելով իսկ :

18 St'ou J. E. Cirlot, *Dictionnaire of Symbols*, tr. from the Spanish by Jack Sage, London 1971, էջ 51-52:

19 «Խոսքն էլ չէր ավարտել՝ աքաղաղը կանչեց : Դրանից անհանգստացած՝ փանտերը հրամայեց սեղանի վրակ գինի հեղել, իսկ ճրագարանն էլ՝ մաքուր գինով օծել : ...Բայց անս շուրով բերեցին հարեանի այդ աքաղաղին, որին փիթոջ հրամանով կաթսայի մեջ եփեցին», «Римская сатира», էջ 174 :

20 «Կամքիս համաձայն արձակածս սարուկներից բացի/... կրակիս մեջ նշված մարդիկ իրենց հասանելիքը կարանան պայմանավ, որ իմ մարմինը պարամություններով ուրեն բոլորի աչքի առջե», «Римская сатира», էջ 234 :

21 St'ou B. B. Болотов, *Лекции по истории Древней Церкви*, т. 2, С.- Петербург 1910, էջ 11:

22 St'ou «Римская сатира», էջ 204-205 :

3. Ավերարանական ակնարկներ Խարիպոնիոսի երկում. Անրիկ շրջանի հեղինակների՝ ավերարանական դրվագներին արված ուղղակի կամ անուղղակի ակնարկները չեն սահմանափակվում Պերպոնիոսի երկերում առկա մեջբերումներով : Անրիկ շրջանի հաջորդ հեղինակը, որի երկերում կան ավերարանական դրվագների ակնարկներ, Խարիպոնիոս Աֆրոդիսիացին²³ է : Վերջինս, որ Պերպոնիոսի ժամանակակիցն է, ներկայացնում է խաչելության, դիվ գողության, հարության դրվագները : Խարիպոնիոսի՝ հարկապես այս վերջին ավերարանական իրողության ակնարկն այնքան հստակ է, որ ուսումնասիրողները վաղուց անրիկ համաձայնվել են՝ ընդունելով Խարիպոնիոսի՝ հարության դրվագներին ծանոթ լինելու փաստը : C. P. Thiede-ը, մանրամասնորեն ուսումնասիրելով Խարիպոնիոսի երկերում ավերարանական դրվագների առկայության հարցը, ապացուցել է Նովիանոս Ավերարանի հետ այդ հարվածների գրական աղերսները²⁴ : Ավելին, Խարիպոնիոսի բնակավայրի՝ Աֆրոդիսիայի և Նովիանոս Ավերարանի գրության վայրի՝ Եփեսոսի տեղագրական ու աշխարհագրական մերձակա դիրքը հավելյալ կերպով հաստատում է ուսումնասիրողների առաջ քաշած տեսությունը : Նշենք նաև, որ Խարիպոնիոսը միակն է, ով խոսում է Խրիստոս-Յիսուսի իրողության մասին՝ օգտագործելով համապատասխան եզրը և այն իբրև մեղադրանք քրիստոնյաների դեմ : Ավելին, խաչելության, թաղման և հարության թեմաները պարբերական են դառնում Ա դարի դասական հեղինակների երկերում : Խարիպոնիոսի երկում Արևելքի կուսակալ Միքրոպի կողմից խաչելության դատապարտված Քերեստը լուռ ու մուռ փակում է իր խաչը և «հանձնվում դահիճների ձեռքը» (հմմտ. Մարթ. ԻԶ 45, Մարկ. Թ 31, ԺԴ 41, Ղուկ. Թ 44, ԻԴ 7) : Երկում Քերեստին ծաղրանքով առաջարկում են նույնիսկ խաչից իջնել և ազատվել մահվանից (κατόβητι հրամայական, երկրորդ դեմք, Խար. Դ 3²⁵, հմմտ. Մարթ. ԻԷ 40) :

Այնուհետև Խարիպոնիոսը ներկայացնում է Կալիբոնի դիագողության, մահվան և հարության դրվագները (Խար. 1, 2-3)²⁶ : Թաղման երրորդ օրը՝ լուսաբացին, երբ արդեն Կալիբոնի դին գողացվել էր, Քերեստը այցելում է գերեզման՝ անուշահոտ յուղերով դիակն օծելու : Բայց արդեն գերեզմանի շեմին նկատում է դիագողության հետքերն ու պապանձվում : Այնուհետև հայտնվում է իրեն հրեշտակ անվանող մեկը և «ավերում» պարադոքսալ լուրն այնպես, որ ոչ ոք չի համարձակվում գերեզմանին մոտենալ կամ ներս մտնել : Վերջապես Ներմոկրատեսը, երիտասարդ կնոջ՝ Կալիբոնի հայրը, համարձակվում է ներս մտնել և հաստատում է դիագողության փաստը : Խարիպոնիոսն այնուհետև շեշտում է ներկաների անհավատությունը կարարվածի նկատմամբ և նրանց զարմացական հայացքները դարձնում գերեզմանի առաջ : Ներս է մտնում նաև Քերեստը, և, մինչդեռ ներկաների մեծ մասը կարարվածը վերագրում էր դիագողերին, որոնք սովորական դիակապուր էին կարարել (ἐκλεψαν αὐτην, հմմտ. նաև Մարթ. ԻԸ 13, ἐκλεψαν αὐτον), Քերեստը հայացքն ուղղում է երկինք, ձեռքերը տարածում ու հռչակում Կալիբոնի աստվածացումը²⁷ :

23 Այստեղ օգտագործել ենք Խարիպոնիոսի երկի ռուսերեն թարգմանությունը՝ Харитон, Повесть о любви Херея и Калипсои :

24 Տե՛ս C.P. Thiede, Ein Fisch für den römischen Kaiser, München 1998, in Rivista di Storia della Chiesa in Italia 54 (2000), էջ 211-216 :

25 Տե՛ս Харитон, Повесть, էջ 76-78 :

26 Տե՛ս Харитон, Повесть, էջ 18-28 :

27 Անդ :

Դիագնոստիկայի երեւոյթը միակն է խաչելության, մահվան եւ հարության կողքին, որ հեւրագայի անարիկ գրականության մեջ հաճախադէպ չի դառնում : $\tau\upsilon\mu\beta\epsilon\alpha\rho\upsilon\chi\omicron\iota$ անունը, որ պատմվեց անգամ հանդիպում է Խարիպոնիոսի երկում, ինչպէս նաեւ Աֆրոդիսիայի գերեզմաններում հայրնաբերված արձանագրություններում, հեւրագայի հունական վիպերգերում գրեթէ անհեւրանում է՝ այդպիսով հաստատելով, որ Խարիպոնիոսի ժամանակ դիագնոստիկայի մասին քրիստոնյաներին արված մեղադրանքները մեծ տարածում էին գրել : Ի դեպ, հարկ է նշել, որ Պոլիպոնիոսի երկերը, Մարթեոսի Ավետարանը եւ Նազարեթի Էդիկըր գրեթէ ժամանակակիցներ են : Ասվածից կարելի է ենթադրել, որ դիակապուրի մասին մեղադրանքը հեւրագայի գրականության մեջ կորցնում է իր արժեքը եւ վերջնականապէս դուրս մղվում գրական երկերի թեմատիկայից, այնինչ մնացած թեմաները՝ խաչելություն, մահ, հարություն, շարունակում են օգտագործվել վիպերգակների եւ թարգմանիկների կողմից :

Այսպիսով վերը շարադրված փաստերը մեզ բերում են այն համոզման, որ -Զ. Կ. Ա դարում հունահռոմեական աշխարհում քրիստոնեությունը, չնայած հալածանքներին, բավական ծավալվել էր եւ անգամ դարձել անարիկ գրողների ու թարգմանիկների բնարկման առարկա : Նրանում առկա որոշ գաղափարներ նույնիսկ ներշնչման աղբյուր էին անարիկ գրողների համար : Այս առումով հեւրագա դարերում նկատվող քրիստոնեության՝ դասական հելլենիստիկական հասարակարգում ներմշակութայնացումը շարաւալելի հասկանալի է դառնում՝ իբրեւ պարմական օրինաւաւություն, հենց այս նախնական, ուշ անարիկ շրջանի հեղինակների հեւր առնչակցության մեջ դիտարկելիս :